

Բանալի բառեր՝ ՕՈՒԼ-երը ՀՀ-ում, ՕՈՒԼ-երի ներհուսքի մաքուր պաշարներ, զուտ ներհուսք:

ՀՏԴ 339.13

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ (ՕՈՒԼ) ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմա՝
Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ օրինակով)


Գիտական ղեկավար՝
Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հայկանուշ ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ


ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒԼ-երը մշտապես ունեցել են նշանակալի դեր և ազդեցություն: Տնտեսության վրա ՕՈՒԼ-երի ազդեցությունը հատկապես ակնհայտ է եղել 90-ական թվականներին, երբ ՕՈՒԼ-երը կազմել են հիմնական համախառն կապիտալի գերակա մասը: Թեև ՀՀ-ն աշխարհում ՕՈՒԼ-երի ներգրավվածության մակարդակով առաջատար երկրներից չէ, այդուհանդերձ, ՀՀ-ում կատարված ընդհանուր ներդրումների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ՕՈՒԼ-երը:

Գծապատկեր 1.
ՀՀ-ում ՕՈՒԼ-երի ներհուսքի մասնաբաժինը ընդհանուր ներդրումների մեջ, %



Գծապատկեր 2.


ՀՀ-ում ՕՈՒԼ-երի ներհուսքի մաքուր պաշարների մասնաբաժինը ընդհանուր ներդրումների մաքուր պաշարների մեջ



2007-2015թթ. ՀՀ-ում ՕՈՒՆ-ի ներհուսքը ընդհանուր ներդրումների մեջ հիմնականում մի քանի անգամ գերազանցել է այլ ներդրումների ներհուսքին: ՀՀ-ում պորտֆելային ներդրումները ընդհանուր ներդրումների փոքր մասն են կազմում՝ ելնելով երկրի ֆինանսական շուկայի թերի զարգացվածությունից և անկատարությունից, ինչպես օրինակ արժեթղթերի շուկայի բացակայությունից կամ չափազանց թերի զարգացվածությունից: Այդուհանդերձ, միջազգային շուկայում պորտֆելային ներդրումների ներգրավումը ևս երկրների կարևորագույն տնտեսական քաղաքականություններից է համարվում, քանի որ վերջիններս նշանակալի դրական ազդեցություն ունեն երկրի տնտեսության վրա: Ընդհանուր ներդրումների մեջ ՕՈՒՆ-երի ունեցած բավականին մեծ մասաբաժնի մասին է խոսում նաև ՕՈՒՆ-երի ներհուսքի մաքուր պաշարների ցուցանիշը:


ՕՈՒՆ-երի պաշարները 2007-2015թթ. ժամանակահատվածում ընդհանուր ներդրումների պաշարների մեջ չեն ունեցել էական տատանումներ, գրեթե միշտ ունեցել են կայուն դիրք և կազմել են ընդհանուր ներդրումների մաքուր պաշարների հիմնական մասը:

Գծապատկեր 3.
ՕՈՒՆ-երի զուտ ներհուսքի և զուտ արտահոսքի շարժը ՀՀ-ում



ՕՈՒՆ-երի հոսքերը ՀՀ-ում տարիների ընթացքում ունեցել են տատանումներ: Դա հատկապես ակնհայտ է ՕՈՒՆ-երի ներհուսքերի դեպքում: Գծապատկեր 3-ից ակնհայտ է, որ 2005-2015թթ. ընկած ժամանակահատվածում ՕՈՒՆ-երի զուտ ներհուսքը իր նվազագույն ցուցանիշն է ունեցել 2015թ.-ին, իսկ առավելագույնը՝ 2008թ.-ին: 2015թ.-ին ՕՈՒՆ-երի ներհուսքը շուրջ 5.2 անգամ գիջում է 2008թ.-ի միևնույն ցուցանիշին: ՕՈՒՆ-երի ներհուսքի ամենամեծ անկումը նախորդ տարվա համեմատ եղել է 2015թ.-ին՝ ՕՈՒՆ-երի ներհուսքը 2014թ.-ին 404.3 մլն. ԱՄՆ դոլարից 2015թ.-ին դարձել է 180.5 մլն. ԱՄՆ դոլար: Նշված ժամանակահատվածում նախորդ տարվա համեմատ ՕՈՒՆ-երի ներհուսքի ամենամեծ աճը եղել է 2006թ.-ին, երբ 2005թ.-ի 292.1 մլն. ԱՄՆ դոլարից ՕՈՒՆ-երի ներհուսքը 2006թ.-ին դարձել էր 466.5 մլն. ԱՄՆ դոլար: ՕՈՒՆ-երի արտահոսքը նախորդ տարվա համեմատ ամենամեծ աճն է ունեցել 2011թ.-ին: Երբ 2010թ.-ին դիտարկվող ժամանակահատվածում ամենամեծ և կտրուկ անկումից հետո 2011թ.-ին ՀՀ-ից ՕՈՒՆ-երի արտահոսքը կազմեց 215.9 մլն. ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 4.
ՕՈՒՆ-երի ներհուսքի և ՕՈՒՆ-երի ներհուսքի մաքուր պաշարների մասնաբաժինը հիմնական համախառն կապիտալի և ՀՆԱ մեջ




Գծապատկեր 4-ից հատկանշական է այն հանգամանքը, որ ՕՈՒՆ-երը ունեն մեծ տեսակարար կշիռ ինչպես համախառն կապիտալում, այնպես էլ ՀՆԱ մեջ: Եթե 1995թ.-ին ՕՈՒՆ-երի ներհուսքի մաքուր պաշարները ՀՆԱ մեջ եղել են ընդամենը 5%, ապա 2015թ.-ին այդ ցուցանիշը արդեն իսկ կազմել է 40%, սակայն, եթե ՕՈՒՆ-երը համախառն հիմնական կապիտալում 1995թ.-ին կազմել են 12%, ապա 2015թ.-ին կազմել են 9%: Միջազգային տնտեսական գրականությունը դրական է համարում ՕՈՒՆ-երի մեծ տեսակարար կշիռը ՀՆԱ մեջ, սակայն, միևնույն ժամանակ, գրականությունը նշում է, որ ՕՈՒՆ-երի չափազանց մեծ չափաբաժինը համախառն կապիտալում և ՀՆԱ մեջ, երկրի տնտեսությունը դարձնում է ռիսկային և արտահայտում է մեծ փոխկապակցվածություն մեկ գործոնից, որի տատանումների դեպքում երկրի տնտեսությունը կարող է ունենալ անդամնալի հետևանքներ: Գծապատկեր 4-ի տվյալները ՀՀ դեպքում արդեն իսկ կարող են տեսական կարծիք ձևավորել, որ ՕՈՒՆ-երը և

ՀԱԱ-ն սերտորեն փոխկապակցված են, որը նաև հիմք է հանդիսանում եզրակացնել, որ ՕՌԻ-երը փոխկապակցված են նաև տնտեսական աճի հետ:

Գծապատկեր 5.


ՕՌԻ-երի ներհուսքի մաքուր պաշարների և ՕՌԻ-երի զուտ ներհուսքի փոխկապակցվածությունը



ՕՌԻ-երի ներհուսքի մաքուր պաշարները 2005-2013թթ.-ին անընդհատ աճ են ցուցաբերել, սակայն, 2014թ-ին 2013թ.-ի համեմատ պաշարների անկում է եղել, որը 2015թ.-ին կրկին նախորդ տարվա համեմատ աճել է: Այդուհանդերձ, 2015թ.-ին ՕՌԻ-երի ներհուսքի մաքուր պաշարները երեք անգամ գերազանցում են 2005թ.-ի ցուցանիշը: Գծապատկեր 5-ից ակնհայտ է նաև այն հանգամանքը, որ դիտարկվող ժամանակահատվածում ՕՌԻ-երի ներհուսքի և ՕՌԻ-երի ներհուսքի մաքուր պաշարների միջև փոխկապակցվածությունը անընդհատ չէ: Այսպես, 2005-2008թթ. և մաքուր պաշարների և ներհուսքի անընդհատ աճին 2009թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված ՕՌԻ-երի ներհուսքը կտրուկ անկում է ունեցել, որը շարունակվել է մինչև 2010թ.-ը: Մինչդեռ ՕՌԻ-երի մաքուր պաշարները շարունակել են աճել՝ չնայած ավելի փոքր տեմպերներով, քան նախորդ տարիներին: Եվ հակառակը, դիտարկվող ժամանակահատվածում միայն 2014թ.-ի ՕՌԻ-երի ներհուսքի մաքուր պաշարների անկումը չի ուղեկցվել ՕՌԻ-երի զուտ ներհուսքի անկմամբ: Այդուհանդերձ, անգամ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին, ՕՌԻ-երի ներհուսքը այնքան փոքր չի եղել, որքան 2011թ.-ից հետո:

Գծապատկեր 6.

ՀՀ-ում ՀՆԱ մեջ ՕՌԻ-երի զուտ ներհուսքի և արտահոսքի մասնաբաժնի կախվածությունը ՀՆԱ մեծությունից



Չնայած այն հանգամանքի, որ Գծապատկեր 4-ը ցույց է տալիս, որ ՕՌԻ-երի մաքուր պաշարների մասնաբաժինը ՀՆԱ մեջ բավականին մեծ է, այդուհանդերձ, Գծապատկեր 6-ը ցույց է տալիս, որ 2003-2015թթ. ժամանակահատվածում ՀՆԱ ցուցանիշը չունի էական փոխկապակցվածությունը ՀՆԱ մեջ ՕՌԻ-երի զուտ ներհուսքի կամ զուտ արտահոսքի մասնաբաժնի հետ: Այսինքն՝ ՀՆԱ մեծության փոփոխությունը միշտ չէ որ պայմանավորված է եղել ՕՌԻ-երի զուտ ներհուսքի կամ արտահոսքի մեծության փոփոխությամբ:


Եթե նախորդ գծապատկերում ասվում է, որ ՀՆԱ մեծության փոփոխությունը միշտ չէ որ պայմանավորված է եղել ՀՆԱ մեջ ՕՌԻ-երի մասնաբաժնի փոփոխությամբ, ապա Գծապատկեր 7-ը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ մեծությունը և ՕՌԻ-երը ունեցել են նույն տրենդը, այսինքն՝ փաստացի ՀՆԱ ցուցանիշի աճը գրեթե միշտ ուղեկցվել է ՕՌԻ-երի զուտ ներհուսքի աճով և հակառակը: Ասվածը նաև հաստատում է տնտեսագիտական գրականության այն կարծիքը, որ ՀՆԱ մեծության աճը, որը խոսում է նաև երկրի տնտեսական կայունության և զարգացման մասին, նպաստում է ՕՌԻ-երի ներգրավման ավելացմանը:

ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների մեծ մասը բաժին է ընկնում Ռուսաստանին: 2007-2011թթ. Ռուսաստանին է բաժին ընկել ՀՀ-ում կատարված ՕՌԻ-երի կեսից ավելին:


2012-2013թթ. Ռուսաստանը իր դիոբերը գիջել է Ֆրանսիային: Ֆրանսիայից Հայաստան 2012թ.-ին ՕՌԻ-երը կազմել են 230,429.5 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2013թ.-ին 99,116.8 հազ. ԱՄՆ դոլար, ինչը ՀՀ-ում կատարված ընդհանուր ՕՌԻ-երի մեջ կազմել է համապատասխանաբար՝ 40.6% և 36.5% և գերազանցել է Ռուսաստանից կատարված ՕՌԻ-երին շուրջ երկու անգամ: Սակայն 2014թ.-ին Ռուսաստանը կրկին վերականգնել է ՀՀ-ում կատարված ՕՌԻ-երի իր առաջատար դիոբերը, չնայած արդեն ունենալով ավելի քիչ մասնակցություն, քան նախորդ տարիներին:

Գծապատկեր 7.

ՕՈՒՆ-երի զուտ ներհոսքի և ՀՆԱ փոխկապակցվածությունը



Գծապատկեր 8.




Ռուսաստանից Հայաստան ՕՈՒՆ-երի զուտ ներհոսքերի մասնաբաժինը ընդհանուր ՕՈՒՆ-երի մեջ, %


2014թ. ՀՀ-ում կատարված ՕՈՒՆ-երի մեծ ծավալով են աչքի ընկնում նաև Գերմանիան (19,814.3 մլն. դրամ) և Միացյալ Թագավորությունը (13,499.7 մլն. դրամ): 2015թ.-ին ՀՀ-ում կատարված ուղղակի ներդրումների մեծ մասը բաժին է ընկել Շվեյցարիային (41052.2 մլն. դրամ), ինչը կազմել է այդ տարվա ընդհանուր ՕՈՒՆ-երի 59.13%-ը:

Գծապատկեր 9.

Հայաստանում կատարված ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը՝ ըստ երկրների (հարյուր մլն. ՀՀ դրամ)




Գծապատկեր 10.
ՀՀ-ում կատարված ՕՌՄ-երը ըստ տնտեսության տարբեր ոլորտների



ՀՀ-ում 2007-2015թթ. ընկած ժամանակահատվածում ՕՌՄ-երի մեծ մասը բաժին է ընկել էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և հեռահաղորդակցության ոլորտներին: Ընդ որում, եթե հեռահաղորդակցության ոլորտում ՕՌՄ-երը ունեցել են բավականին մեծ մասնաբաժին մինչև 2014թ.-ը, ապա 2014թ.-ին հեռահաղորդակցության ոլորտում ՕՌՄ-երի մասնաբաժինը կտրուկ անկում է ունեցել, իսկ 2015թ.-ին բացակայել են ընդհանրապես: Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտում ՕՌՄ-երի մասնաբաժինը մինչև 2012թ.ը անընդհատ անկում է ունեցել, սակայն, սկսած 2014թ.-ից այս ոլորտը ՕՌՄ-երի ներգրավվածության մակարդակով կրկին ամենաառաջատարերից է: ՀՀ-ում մեծ քանակությամբ ՕՌՄ-եր են հատկացվում նաև խմիչքների արտադրությանը, հանքագործունեությանը, անշարժ գույքի ոլորտին և օդային տրանսպորտի գործունեությանը:

Գծապատկեր 11.
ՀՀ-ում կատարված ՕՌՄ-երը ըստ տնտեսության տարբեր ոլորտների և երկրների



ՕՌՄ-երի ներգրավմամբ առաջատար ոլորտներում ամենակտիվ դրսևորումն են իրականացնում Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան, Միացյալ Թագավորությունը, Գերմանիան, Լիբանանը, Շվեյցարիան և Լյուքսեմբուրգը: Խմիչքների ոլորտում ՕՌՄ-երի մեծ մասը բաժին է ընկնում Միացյալ Թագավորությանը, հանքագործության ոլորտում՝ Շվեյցարիային, հեռահաղորդակցության և էլեկտրականության ու գազի ոլորտում՝ Ռուսաստանի Դաշնությանը, անշարժ գույքի ոլորտում ՕՌՄ-երի միայն մեկ տոկոսն է բաժին ընկնում ՌԴ-ին, մնացած ներդրումները ձևավորում են տասնյակից ավել երկրներ:

Ներկայացվել է 10.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.